# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 82-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի "Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին" N 104-Լ հրամանով և համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղի վարչական տարածքում գտնվող, 06-035-0106-0001 ծածկագրից առանձնացվող, համայնքային սեփականություն հանդիսացող 1,140524 հա հողամասին տրամադրել նոր փոստային (ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գ.Դսեղ, 12-րդ փողոց, 3/5 հողամաս) հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022թ. ապրիլի 06
ք.Թումանյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 83-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով ,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ.հունվարի 18-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 19-Ն որոշումը՝
Որոշում եմ.

1.Թումանյան համայնքի կամավոր խնդիրների լուծման իրականացման համար կազմել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.
1)Ռոման Շաքարյան - Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
2)Դավիթ Վանյան -ավագանու անդամ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,
3)Ռուզաննա Շահվերդյան -Աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի քարտուղար,
4)Արմիկ Մուրադյան - Գլխավոր մասնագետ-հաշվապահ հանձնաժողովի անդամ,
5)Մարգարիտ Զատինյան -Առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ:

2.Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել համայնքապետարանի աշխատակազմ դրանք մուտքագրվելուց հետո մեկամսյա ժամկետում, և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:
3.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2021թ. ապրիլի 19-ի <<Թումանյան համայնքի կամավոր խնդիրների լուծման իրականացման համար հանձնաժողով կազմելու մասին>> թիվ 36-Ա որոշումը և Դսեղ համայնքի ավագանու 2017թ. հունիսի 2-ի <<Հանձնաժողով կազմելու մասին>> թիվ 18-Ա որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. ապրիլի 06
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 84-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի,24-րդ կետով,38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. հունվարի 18-ի <<Թումանյան համայնքի 2022թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 10 -Ն որոշումը,Թումանյան համայնքի ավագանու 2022թ. հունվարի 18-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի կամավոր խնդիրները,կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 19-Ա որոշումը,Թումանյան համայնքի բնակիչների դիմումները,ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի կամավոր խնդիրների լուծման իրականացման հանձնաժողովի եզրակացությունը և Թումանյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Թումանյան համայնքի բյուջեի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 /Թումանյան համայնքի նորածին երեխաների ծնողներին տրամադրել միանվագ դրամական օգնություն ՝համաձայն հավելվածի:
2.Թումանյանի համայնքապետարանի գանձապահ Տիրուհի Քարիմյանին լիազորել Արդշինինվեստ բանկ Ալավերդու մասնաճյուղից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022թ. ապրիլի 07
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
07 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 85-Ա

## ՍԱՄՎԵԼ ՀԵՆՐԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ 06-035-0048-0006 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11–րդ բաժնի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով,հաշվի առնելով, որ Սամվել Հենրիկի Կարապետյանի կողմից կառուցված ինքնակամ բնակելի տունը և բնակելի պարիսպը չի խախտում այլ անձանց իրավունքները,օրենքով պահպանվող շահերը,վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանս-պորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,և հիմք ընդունելով համապատասխան որակավորում ունեցող ԱՁ <<Գասպար Վեքիլյան>>-ի կողմից չափագրված բնակելի տան և բնակելի դարպասի հատակագծերը,Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը՝N06042022-060063, տրված 2022թ. ապրիլի 6-ին և հաշվի առնելով Սամվել Հենրիկի Կարապետյանի/մուտք 07.04.2022թ. թիվ 256/ դիմումը՝
Որոշում եմ.

1. Օրինականացնել Սամվել Հենրիկի Կարապետյանի սեփականությունը հանդիսացող 06-0035-0048-0006 կադաստրային ծածկագրով բնակելի տան և բնակելի դարպասի ինքնակամ կառուցված 107,47 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 13.06 քմ բնակելի պարիսպը և ճանաչել օրինական:

2. Սամվել Հենրիկի Կարապետյանին՝
համայնքապետարանի 900265002528 հաշվեհամարին վճարել 89553,79 /ութանասունինը հազար հինգ հարյուր հիսուներեք դրամ յոթանասունինը լումա/դրամ,որից բնակելի տան օրինականացման համար 79850.21/յոթանասունինը հազար ութհարյուր հիսուն դրամ քսանմեկ լումա/ դրամ և բնակելի պարիսպի համար 9703,58/ ինը հազար յոթ հարյուր երեք դրամ հիսունութ լումա/դրամ:
Վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. ապրիլի 07
ք.Թումանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**
7 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 86-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. հունվարի 18-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2022թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 8-Ն որոշումը և Թումանյան համայնքի ԱՁ -ների հայտերը՝ Որոշում եմ.

1.Թույլատրել Թումանյան համայնքի ներքոգրյալ ԱՁ-ներին իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք.

1/Հախվերդյան Հովակիմ-ք.Թումանյան 2022թ. ապրիլի 1-ից մինչև 2022թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
2/ Գրիգորյան Սուսան -ք. Թումանյան 2022թ. ապրիլի 1-ից մինչև 2022թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
3/ Սարգսյան Հայկուշ -ք. Թումանյան 22022թ. ապրիլի 1-ից մինչև 2022թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
4/ Չերչինյան Սեդրակ -ք.Թումանյան 2022թ. ապրիլի 1-ից մինչև 2022թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
5/ Սարգսյան Գայանե -ք.Թումանյան 2022թ. ապրիլի 1-ից մինչև 2022թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
6/ Մաթևոսյան Սուսաննա - գ.Ահնիձոր 2022թ. ապրիլի 1-ից մինչև 2022թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
7/ Սահակյան Անահիտ - գ.Լորուտ 2022թ. ապրիլի 1-ից մինչև 2022թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
8/ Ջուրաբյան Լուսինե - գ.Լորուտ 2022թ. ապրիլի 1-ից մինչև 2022թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
9/ Սարգսյան Մարինե - գ.Մարց 2022թ. ապրիլի 1-ից մինչև 2022թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
10/ Ղազարյան Հրանուշ -գ. Մարց 2022թ. ապրիլի 1-ից մինչև 2022թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
11/ Սարգսյան Մանուշակ -գ. Մարց 2022թ. ապրիլի 1-ից մինչև 2022թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
12/Վանյան Լաուրա-գ.Քարինջ 2022թ. ապրիլի 1-ից մինչև 2022թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
13/Քոչարյան Նաիրա -գ.Քարինջ 2022թ. ապրիլի 1-ից մինչև 2022թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
14/Մխիթարյան Մխիթար -գ.Քարինջ 2022թ. ապրիլի 1-ից մինչև 2022թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:

2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022թ. ապրիլի 07
ք.Թումանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
08 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 87-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15 –Ի ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով՝
Որոշում եմ.
1.2022 թվականի ապրիլի 15-ին ժամը 12-00-ին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի մշակույթի պալատում գումարել Թումանյան համայնքի ավագանու նստաշրջան,հետևյալ օրակարգով.
1) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2022թ. ապրիլ 15-ի նստաշրջանի օրակարգը հաստատելու մասին
2) Թումանյան համայնքի 2022-2026 թվականների զարգացման ծրագրի հաստատման մասին
3) Թումանյան համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին
4) Թումանյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի << Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
5) Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների սուբվենցիաներ ստանալու նպատակով <<Թումանյան քաղաքի 4-րդ փողոցի սալարկում>>, <<Թումանյան քաղաքի մշակույթի պալատի շենքի տանիքում արևային համակարգի տեղադրում>>, <<Համայնքի բոլոր բնակավայրերում լուսավորության ընդլայնում>> և <<Մարց, Լորուտ, Շամուտ, Աթան, Ահնիձոր բնակավայրերում խմելու ջրի արտաքին ջրագծերի հիմնանորոգում>> սուբվենցիոն հայտերին համաձայնություն տալու մասին
6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու և դրանց անհատական կազմը հաստատելու մասին
7) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամի և աշխատակազմի աշխատակցի ներկայացուցիչների թեկնածությունները հաստատելու մասին
8) Թումանյան համայնքում սոցիալակա նաջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին
9) Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը վարձակալության տալու մասին
10) Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը վարձակալության տալու մասին
11) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու անդամ Էդգար Վարդգեսի Մելիքսեթյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին
12) Թումանյան համայնքի ավագանու նստաշրջանի օրը որոշելու մասին

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. ապրիլի 08
ք.Թումանյան